«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ»

Առարկան՝«Դասվար»

Հետազոտող ուսուցիչ՝ Թագուշ Ղևենի Հավհաննիսյան

Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ՎԱՀՐԱՄ ԲԱԲԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Երևան 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

N ՎԵՐՆԱԳԻՐ

1. Հեղինակ

2.Պլանավորում

3.Ներածություն

4. Սովորողների իմացական գործընթացների զարգացումը՝ ըստ նոր ժամանակի կրթության պահանջների

5.Սովորողների մեջ ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունների ձևավորման, զարգացման աշխատանքի կազմակերպման սկզբունքները, առանձնահատկությունները

6.Աշխատանքի կազմակերպման փուլերը առարկայի դասավանդման ընթացքում

7. Աշխատանքի տեսակները առարկայի դասավանդման ընթացքում

8. Աշխատանքի ընթացքում առաջադրանքների ծավալը և բնույթը

9. Եզրակացություն

1. Ընդհանրացումներ

2.Վերջնարդյունքների արժևորում

10.Գրականության ցանկ

11.Հավելված

Հեղինակ

«Միտք-խիղճ-ազատ կամք հոգևոր ներդաշնակությամբ օժտված անձն ունի մտածողության լայն դաշտ, ուր ձևավորվում է մարդկային կատարելությունը՝ անհատը, ով իր մեջ է կրում մարդակերտման հիմնարար գիտելիքների բարձրագույն որակը՝ որպես անցյալի հարուստ փորձ, նոր ժամանակի կրթության որոշիչ անհրաժեշտություն և գալիք զարգացումների կանխատեսություն, ում անունն է ուսուցիչ...»/Թ.Հ./:

Պլանավորում

1. Թեմայի ընտրություն

2. Թեմայի կատարողական հարցի ձևակերպում

3.Նպատակի առաջադրում

4.Ըստ հաջորդական աշխատանքի, մասերի վերնագրում

5. Ըստ հաջորդական աշխատանքի, մասերի բնութագրում

6.Հետադարձ կապի ապահովում

7. Վերջնարդյունքների կանխատեսում

8. Անդրադարձ

9. Եզրակացության հիմնավորում՝

1- ըստ հիմնական գաղափարի հասկացության հարցի,
2- 2- ըստ թեմայի վերաբերյալ հարցի

ԹԵՄԱ՝ «ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ»

Առաջադրված հարցը՝-

Ինչպիսի՞ հնարավոր միջոցների և ձևերի օգտագործմամբ ուսումնառության ընթացքում սովորողների մեջ ձևավորել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ, ի՞նչ ակնկալիք ունենալ, որ կարողանան հիմք հանդիսանալ հետագա զարգացման համար։

Նպատակ՝

1. - Ակադեմիական

- Հիմնվելով մանկավարժական ավանդական առաջադեմ փորձին՝ նոր ժամանակի կրթության պահանջներին համապատասխան, սովորողների մեջ ձևավորել և զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ առարկայի դասավանդման ընթացքում՝ համապատասխան գործառույթների իրականացմամբ,

- ուսուցումը ըստ հիմնահարցի ծառայեցնել սովորողի մեջ հետագա մտավոր, գաղափարական, գիտական և մասնագիտական կողմնորոշման անհրաժեշտ ունակությունների մակարդակ ապահովելուն, այլ կերպ ասած՝ քաղաքակիրթ հասարակության լիարժեք, բազմակողմանի լավագույն հատկանիշներով օժտված մարդ-անհատի ձևավորման, զարգացման համապատասխան մակարդակի ապահովմանը։

2. Սոցիալական

- գործառույթների կազմակերպման ձևերի եղանակների միջոցով ապահովել սովորողի մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների ձևավորմանը և զարգացմանը,

- արժևորել սովորողների գործողությունները աշխատանքի հաջորդական վերջնարդյունքներում և կարևորել ցուցաբերած կարողությունները սահմանված ժամանակահատվածում

- առաջադրել ակնկալվող խնդիրներ՝ վերջնարդյունքների հնարավոր կանխատեսումների շուրջ, որոնք լուծելի կատարողական են առարկայի դասավանդման ընթացքում։

Խնդիրներ-

- կարողանալ՝ ըստ առաջադրված հարցի, մշակել աշխատանքի քայլաշար,
- կարողանալ՝ ըստ աշխատանքի քայլաշարերի, պլանավորել գործողությունները,
- տեղեկատվական տվյալներ հավաքել, գրանցել,
- դիտարկել տեղեկատվությունը
- կատարել հղումներ
- կարողանալ եզրակացությունը ձևակերպել և հիմնավորել՝ ըստ թեմայի առաջադրված հարցի,
- կարողանալ կատարել անրադարձ, գնահատել։

Մաս 1. Ներածություն

Բոլոր ժամանակներում մանկավարժական գլխավոր խնդիրը եղել է, կա ու կմնա սովորողների ուսումնասիրելու, նրանց տարիքային առանձնահատկությունները բացահայտելու ուսումնառությունը ճիշտ հիմքերի վրա կառուցելու ձևերի, մեթոդների գտնելը, մշակելը: տարբեր ժամանակներում ուսուցման նոր պահանջներ են առաջ քաշվել և նոր մոտեցումներ առիթ տվել:

Դեռևս կրտսեր դպրոցից երեխան՝ սովորողը, հայտնվում է ուսումնառության շեմին: Կրթության առաջին աստիճանում ձևավորվում է սովորողի սովորել կարողանալու անհրաժեշտ կարողությունը, ունակությունը, որոնք հետագայում վերահիմաստավորվում են հմտության: Նոր ժամանակի կրթության հրամայականն է դառնում՝ հենվելով մանկավարժական առաջավոր փորձին, ունենալով մասնագիտական համապատասխան որակավորում, տիրապետելով ժամանակակից ուսուցման մեթոդները, ձևերն ու միջոցները, ելնելով պետական չափորոշչային կրթության կազմակերպման սահմանված համակարգից, հետևողականորեն և նպատակաուղղված, բավականին բարդ ու երկարատև ընթացակարգով իր գործունեությունն է ծավալում ապագա մարդու ձևավորման պատասխանատու, անշահախնդիր և անաչառ սկզբունքներով սովորեցնողը՝ ուսուցիչը:

Ուսոցումը և ուսումնառությունը միաժամանակյա փոխկապակցված գործառույթ է, որը և իրականացնում է անձի ձևավորումը: Ըստ մտածող Դյաչենկոյի այդ գործառույթը իրականացվում է ուսուցչի և սովորողների փոխպազդեցության եղանակների հաջորդական շարքով: Այդ փոխազդեցության եղանակները, ձևերն ումեթոդները իրենց մեջ են ներառումուսուցչի ուսումնական գործունեության ողջ ընթացքը: Հիմնավորելով մեթոդների ու կազմակերպման ձևերի անխզելի կապը, Դյաչենկոն տալիս է ուսուցման մեթոդի իր սահմանումը՝ «Ուսուցման մեթոդը ուսումնական գործընթացի կազմակերպման կառուցվածքն է գործողության մեջ» («Մանկավարժ» ամսագիր-10, էջ՝126): Այլ ձևակերպմամբ՝ «ուսուցման մեթոդները… նույն ուսուցման ձևերն են՝ ենթարկված կոնկրետ նպատակների ու խնդիրների, կապված ուսուցման պայմանների ու կոնկրետ բովանդակության հետ» («Մանկավարժ» ամսագիր-10, էջ՝ 79): Դյաչենկոն իր դիդակտիկական ուսումնասիրություններում նշում է երեք հիմնական մեթոդների առկայություն՝ անհատական, կոլեկտիվ, խմբային: Որոնց հանդեպ իր վերաբերմունքն է դրսևորել նշելով դրանց դրական և բացասական կողմերը սովորողի ձևավորման գործում, հիմնվելով այն տեսությանը, որ ուսուցման արդյունավետությունը՝ հիմնված ուսուցման գիտականությանը, սովորողների հմտությունների և ունակությունների զարգացմանը, մարդ-անհատի արժեքային

համակարգի ձևավորմանը, իրականացնել հնարավոր է արդի ժամանակաշրջանում ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների միջոցների և ձևերի օգտագործմամբ, խմբային ուսուցման մեթոդի առկայությամբ՝ հանրակրթության մեջ:

Մանկավարժության մեջ՝ ըստ ակադեմիկոս Վ. Բաբանսկու «ուսուցման մեթոդները կրթության զարգացման խնդիրներն իրականացնող մանկավարժների ու սովորողների փոխկապակցված գործունեության եղանակներն են» («Մանկավարժ» ամսագիր - 8 էջ՝171): Մանկավարժական մեջ ուսումնական գործունեության հիմնական ուղղվածությունը անձի ձևավորման խնդիրն է: Որի լիարժեք արդյունքում կատարյալ մարդ-անհատը բնորոշում է մարդկության ապագան, որը միշտ և անհրաժեշտորեն հիմնվում է անցյալի փորձին՝ այն ձեռքբերումներին, որոնց շնորհիվ կարողանում է ներկայացնել ներկան և նայել ապագային:Կրտսեր դպրոցում ուսուցչի իմացականության համակարգով է հիմք դրվում անձի ձևավորման ողջ գործընթացը: Այն պահանջում է ընտրել այնպիսի մեթոդներ, ձևեր, միջոցներ, որոնք կսովորեցնեն երեխային սովորել, այսինքն՝ կարողանան ուսումնական գործնեություն ծավալել: Եթե երեխան սովորի սովորել («Ես կարող եմ ինքս ինձ սովորեցնել»), ապա կկարողանա զարգացնել իր ճանաչողական հետաքրքրությունները («Ես սիրում եմ սովորել, ամեն ինչ հետաքրքիր է»), ներքին դրդապատճառները («Հասկանում եմ, թե ինչու եմ սովորում »), անրադարձ կատարելու տարրական կարողությունները («Ես ընդունում եմ ուսուցչի գնահատականը և ինքս էլ կարողանում եմ գնահատել իմ գործունեությունը»): Կրտսեր դպրոցականը կարող է պատասխանել ոչ միայն այն հարցին ի՞նչ եմ ես անում, այլ նաև՝ ինչպե՞ս եմ այն անում հարցերին: Այս բոլորը նպաստում են սովորողի ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների ձևավորման կարևորագույն խնդիրների լուծմանը: **(Հավելված՝ Մաս 1, 1(ա),1(բ),1(գ)):**

Մաս 2. Սովորողների իմացական գործընթացների զարգացումը՝ ըստ նոր ժամանակի կրթության պահանջների

Ինքնուրույնությունը անձի զարգացման խթան է: Այն նույնացվում է «սովորեցնել սովորել» հիմնախնդրին, որի խթանման, այլ կերպ ասած, շարժառիթների առկայությունը բնորոշում է ուսուցման և ուսումնառության գործունեության ճիշտ կազմակերպումը, որը հիմնված է ուսուցման նպատակներին՝ ա)ուսուցանող, բ) զարգացնող:

Ինքնուրույնությունը անհատի անձնային որակն է, որն օրինաչափորեն համակարգում է սովորողի իմացական դրսևորումները՝ նախաձեռնությունը, ստեղծագործական ունակությունները: Դրանց շնորհիվ իրականացվում է սովորոցների իմացական գործընթացների զարգացումը, լուծվում կրթական զարգացնող խնդիրները.

1. մտավոր և ֆիզիկական հնարավորությունների բացահայտմամբ,

2. տեսական և գործնական գիտելիքների զուգակցման հմտությունների ձևավորմամբ,

3. տեղեկատվական հաղորդակցակ ունակությունների ձևավորմամբ,

4. կազմակերպչական նախաձեռնողական և ստեղծագործական ունակությունների զարգացմամբ,

5. սովորողի ինքնուրույնության աստիճանի (մակարդակի) բարձրացմամբ,

6. ինքնաարտահայտման, ինքնակատարելագործման, ինքնավերլուծման ունակությունների ձևավորմամբ: Ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունները խթանող աշխատանքները տրվում են սովորողների ուսումնառության տարիքային զարգացվածության առանձնահատկություններին համապատասխան՝ չափորոշչահեն եռաստիճան մակարդակներով.

I մակարդակ — ընկալում է, մտապահում, վերարտադրում,

II մակարդակ—ստացած գիտելիքի կիրառում ստանդարտ միջավայրում,

III մակարդակ — գիտելիքների կիրառում ոչ ստանդարտ միջավայրում:

Կրտսեր դպրոցում ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունների ձևավորումը կատարվում է ուսուցչի

անմիջական ուղղորդմամբ և վերահսկմամբ։ Սովորողների նշված որակների ձևավորումը կախված է ուսուցչի վարպետությունից, նպատակաուղղված կազմակերպման ձևերից։ Սովորողների բազմաբնույթ անձնային որակների կողքին ինքնուրույն մտածողությունն է, որը նրան առաջնորդում է նախաձեռնության և ստեղծագործական աշխատանքի, ձևավորում ստեղծագործական ունակություններ, այնուհետև մղում ստեղծագործական վերելքի՝ գործունեության յուրաքանչյուր ոլորտում, ուր կարողանում է գտնել իր ներքին ազատությունը, և որն արտահայտվում է ստեղծելու, արարելու, հասարակության լիարժեք անդամ զգալու իր ողջ ներաշխարհով, ներուժով։ Հետազոտելով, ուսումնասիրելով և ողջ մշակված քայլաշարերի հաջորդականությամբ, ընդհանրացումներով, վերլուծությամբ և եզրակացությամբ ձևավորում են սովորողների նախաձեռնությունը, ինքնուրույնությունը և ստեղծագործական ունակությունները, որոնք հետագայում բնորոշում են նրանց ձեռք բերած հմտությունները։

Կազմակերպման հնարները՝

1. առանձնացնել գլխավորը, տեսնել օրինաչափությունը, կատարել եզրահանգումներ,

2. հետևողական, տրամաբանորեն հիմնավորել իր գործողությունները և վերահսկել դրանք,

3. ստանալ արդյունքները առանց օգնության դիմելու,

4. գիտելիքները կիրառել ոչ ստանդարտ պայմաններում, հաճախակի բարդացնելով՝ ստեղծագործաբար։

Այս գործառույթները կազմակերպվում են որոշակի մակարդակներով.

1. Պարզ վերաարտադրողական՝ ըստ նմուշի կանոնների կատարվում տրված ուսումնասիրվող առաջադրանքները։

2. Ընտրովի՝ սովորողները մի շարք կանոններից, դատողությունների օրինակներից, սահմանումներից կարող են ընտրել մեկը և կիրառել այն նոր առաջադրանքների, նյութերի ուսումնասիրման և կատարման գործընթացում։

3. Մասնակի որոնողական՝ սովորողները կիրառում են առավել ընդհանրական կարողություններ, որոնք ձեռք են բերել այլ առարկաների և այլ թեմաների ուսուցման ընթաքցում: Կարողանում են ընտրել, պլանավորել և կազմակերպել իրենց գործընթացը:

4. Ստեղծագործական գործընթաց՝ սովորողները ծավալում են ճանաչողական, տրամաբանական հետազոտական համալիր գործունեություն (նախօրոք մշակնած քայլաշարերով): Ուսուցիչը աշխատանքը կազմակերպելիս նկատի է ունենում սովորողների՝ըստ կարիք պայմանները, առանձնահատկությունները, հստակեցնում է աշխատանքի տարբերակված նպատակը, ապահովում յուրաքանչյուր սովորողի իմացական, կարողությունների ձևավորման ավելի բարձր արդյունավետությունը ուսումնառության ընթացքում: Անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի տարիքային անհատական զարգացածության առանձնահատկությունները՝

- հիշողությունը.

- ընկալունակությունը.

- մտածողությունը

- նախապատրաստվածությունը

Սովորողների աշխատանքների կազմակերպման արդյունավետ ձևը խմբային համագործակցային գործընթացն է: Առաջադրանքները մշակվում են հաջորդականության սկզբունքով՝ ըստ խմբերի, սովորողի առանձնահատկությունների, կարողությունների և հետազոտությունների: Ցածր ունակություն և կարողություն ունեցող սովորողների խմբի համար մշակվում են մտավոր ակտիվությունը բարձրացնող, մտածողությանը խթանող առաջադրանքներ, որոնք նաև ձևավորում են գիտելիքների ընկալման, իմաստավորման և ամրապնդման գործընթացը, նպաստում գիտելիքների համակարգմանն ու կատարելագործմանը:Առավել ուժեց սովորողների խմբի համար մշակվում են առաջադրանքներ, որոնք պահանջում են առավել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական մոտեցումներ:

Խմբերը ձևավորվում են նաև սովորողների ցանկությունների հիմքով: Հիմնականում նույն հետաքրքրություններով և աշխատանքի նույն ոճ ունեցող սովորողներն են ցանկանում աշխատել համատեղ: Այն նպաստում է համագործակցային ունակությունների ձևավորմանը: Ուսումնական

հաստատություններում կիրառվում է նաև այլընտրանքային տարբերակված՝ ինքնուրույնությունը, նախաձեռնությունը, ստեղծագործական ունակությունները զարգացնող, ուսումնասիրման և հետազոտման ենթակաաշխատանքներ, որոնց դեպքում հաշվի են առնվում սովորողների անհատական առանձնահատկությունները։ **(Հավելված՝ Մաս -2, (1,2,3))։**

Մաս 3 .Սովորողների մեջ ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունների ձևավորման, զարգացման աշխատանքի կազմակերպման սկզնուքները, առանձնահատկությունները

Սովորողների խմբային մեթոդով աշխատանքները առարկայի դասավանդման ընթացքում ակնկալում են նրանց ունակությունների և հմտությունների բացահայտման որակները, մակարդակները, որոնք խթան են ակտիվ գործունեության, որոնց միջոցով սովորողները համագործակցային աշխատանքի հմտություններ ձեռք կբերեն, մասնագիտական կողմնորոշման հնարավորություն կձևավորեն (համատեղ և գործարքային հարաբերություններում), կունենան անձի որակային հատկանիշներ.

- բանավոր խոսք,

-հաղորդակցություն,

-համագործակցային աշխատանքի ընկալման մակարդակ,

-տեղեկատվական գիտելիքների յուրացման և օգտագործման կարողություններ,

-տրամաբանական և ստեղծագործական ունակություններ։

Չարլզ Դարվինն ասում է «Ես կարծում եմ, որ քիչ թե շատ արժեքավոր բաները ես սովորել եմ ինքնուրույնության միջոցով », որը կարելի է նույնացնել որոշ առումով ինքնուրույնությանը՝ այն զուգակցելով խմբային համագործակցային ստեղծագործական գործընթացներին, որոնք ծառայում են որոշակի նպատակի ձևավորել մարդ-անհատի ինքնուրույնությունը մասնագիտական մազմազան ոլորտներում։ Ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունները սովորողների ուսումնառության ընթացքում ձևավորելով՝ ուսուցման ընթացքում բարձրանում է սովորողների իմացական, ստեղծագործական հմտությունների, ունակությունների և կարողությունների մակարդակը։ Ուսուցչի դերը աշխատանքի ճիշտ կազմակերպման մեջ է (հետաքրքիր, հասանելի, ոչ լրիվ հասանելի խնդրահարույց)։

Այս գործոնների հիմքի վրա ապահովում է սովորողների հետ արդյունավետ աշխատանքը։ Տարբերվում են սովորողների ինքնուրույնության, և նախաձեռնության, ստեղծագործական ունակությունների մակարդակները; Ինքնուրույնությունը՝ համագործակցությամբ հանդերձ, որպես սովորողների որակային հատկանիշների

ձևավորման խթան, պետք է հիմնավորված մոտեցումներով զարգացնել, որտեղ մեծ դեր ունի աշխատանքը կամ քայլաշարը։

1. Հասկանալ ընկալել, մտածել։

2. Աշխատանքի պլանավորում՝ սահմանելով ժամանակի տևողությունը։

3. Տեսական նյութի ամբողջական յուրացման հենքի վրա կատարել գործընթացը, որի արդյունքում ինքնաստուգմամբ, վերլուծմամբ և ինքնագնահատմամբ կապահովվի սովորողների աշխատանքի անհրաժեշտ մակարդակը և հետագա զարգացումը։

Ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունների զարգացումները մեկը մյուսի հետ սերտ կապի մեջ են։ Նյութը ընտրելիս չպետք է ծանրաբեռնել առաջադրանքների բարդությամբ և ծավալով, այսինքն՝ նպատակահարմար է կառուցել «մինիմում-մաքսիմում» սկզբունքով, պարտադիր բոլորի և նախատեսված այն սովորողների համար, ովքեր առավել հետաքրքրություններ և հակումներ ունեն այդ նյութի, առարկայի հանդեպ։ Համագործակցային իմացական գործընթացները զարգացնող ուսումնասիրման նյութին զուգահեռ՝ առանց ուշացնելու այն ժամանակահատվածը, որի ընթացքում կարող են սովորողները մտապահել և օգտագործել ուսումնասիրվող նյութից ստացած գիտելիքները, առավել հետաքրքրությամբ և արդյունավետությամբ կազմակերպելու խթան են՝ իմացական ունակությունների ձևավորման հարցում։ Հետազոտությունները ցույց են տալիս, որ նյութի ուսումնասիրումից մեկ ժամ հետո սովորողները մտաբերում են դրա 44%-ը, իսկ 2,5-8 ժամ հետո միայն 28%-ը։ Սովորողներին նածապատրաստելով աշխատնքի կատարմանը՝ անպայման անհրաժեշտ է ստեղշել հոգեբանական տրամադրվածություն, այն ճիշտ կատարելու ուսումնասիրվող նյութը ճկուն յուրացնելու համար։



Աղյուսակ 1

Մաս 4 .Աշխատանքի կազմակերպման փուլերը առարկայի դասավանդման ընթացքում

Հարց.- Ինչպիսի՞ փուլեր սահմանել առարկայի ուսուցման և ուսումնառության ընթացքում և ի՞նչ միջոցներով ապահովել՝ ըստ նպատակի ու խնդիրների, աշխատանքների վերջնարդյունքների արժևորման անհրաժեշտ մակարդակները։

Սովորողների մեջ ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունների ձևավորման աշխատանքները առարկայի ուսուցման և ուսումնառության ընթացքմ կիազմակերպում են հիմնականում խմբային աշխատանքի ձևով, որը նպատակաուղղված է սովորողների համագործակցային աշխատանքի որակային հատկանիշների ձևավորմանը։ Ուստի աշխատանքի կազմակերպումը ներառում է հինգ հիմնական փուլ։

1. Կազմակերպչական փուլ – Այն սովորողների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է այն ամենով, ինչը պետք կլինի սովորողներին ընթացքում (ոսումնական նյութեր, բառարաններ, հուշաթերթիկներ, քարտեր և այլն)**:** Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն նախապատրաստումն է արդյունավետ աշխատանքր կազմակերպման համար։ Սովորողներին մղում է հետաքրքրության և անպայման՝ որակով աշխատելուն։

2. Նախապատրաստական փուլ - Ո ւսուցիչը (ղեկավարը) սովորեցնում է աշխատանքի կարգապահական կանոնները, նշում կարևոր ելակետերը, ուշադրության կենտրոնացումը,, ինքնաստուգում կատարելը և այլն, այն ամենը, ինչը կնպաստի աշխատանքի արդյունավետությանը։

3. Կողմնորոշիչ փուլ - Այս փուլում սովորողները ծանոթանում են թեմային վերաբերող առաջադրանքների բովանդակությանը։ Այն ուսուցիչը (ղեկավարը) մշակում է նախօրոք չափորոշչային երեք մակարդակներով, որոնց համապատասխան ձևավորում են խմբերը, նշվում՝ ըստ աշխատանքների հաջորդականության խմբերի ուսումնասիրման ուղղությունը, և այդ ուղղությամբ քայլաշարերի ստեղծումը։

4. Հիմնական փուլ – այս փուլում իրականացվում է խմբերի հիմնական աշխատանքը՝ ըստ ձևավորված պլանի։

5. Ամփոփիչ փուլ- այս փուլում կատարվում է անրադարձ, ուսուցիչի (ղեկավարի) ուղղորդությամբ խմբերը ներկայացնում են՝ ըստ հաջորդականության, իրենց կատարած աշխատանքի ամբողջական ընթացքը։ Այդ ընթացքում յուրաքանչյուր խումբ քայլաշարի

մեջ նշում է խմբի անդամների անհատական մոտեցումները, որոնց շնորհիվ կատարվում է խմբի ընդհանրական վերջնարդյունքների գնահատում և անհատական գնահատում: Այս ընթացքը հնարավորություն է տալիս բացահայտելու սովորողների համագործակցային, և՛ անհատական որակային հատկանիշների մակարդակը: Այնուհետև խմբերը համակցում են հաջորդական քայլաշարերի աշխատանքները, գնահատում այսինքն՝ ինքնավերահսկմամբ իրականացվում է ինքնագնահատումը: Ուսուցիչը (ղեկավարը) աշխատանքը կազմակերպելիս պետք է նկատի ունենա հանգամանքները, որոնք անհրաժեշտ են.

1- տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի փուլի նախանշում՝ աշխատանքի նպատակահարմարության համար,
2- աշխատանքի տեսակների ընտրություն՝ կիրառելու գիտելիքների ստուգման, ամրակցման փուլերում: Կրթության առաջին աստիճանում՝ կրտսեր դպրոցում, սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների ձևավորումը առարկայի ուսուցման դասընթացում կատարվում է անհրաժեշտ միջոցներով՝ մեթոդական երաշխավորություններ ունեցող հուշաթերթիկներ, հրահանգներ, քարտեր և այլն: դրանք նպաստում են գործողությունների կատարման հաջորդականությունը և սեփական՝ անհատական գործունեության կազմակերպմանը, որոնք զարգացնում են անհրաժեշտ որակներ: Սովորողների աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների առաջադրելը, այդ առաջադրանքները՝ ըստ տեսակների, յուրացվում են նախապես առարկայի ուսուցման և ուսումնառության աշխատանքների միջոցով, որոնք կատարվում են.
3- սովորողների նախապատրաստվածությամբ,
4- առաջադրանքների կատարման նպատակի ձևավորմամբ, ստուգման, ինքնագնահատման, գնահատման և ինքնագնահատման համամասնության պահպանմամբ,
5- քայլաշարերի ճիշտ համակցմամբ՝ արդյունավետ վերջնարդյունքին հասնելու համար:

6- սովորողների ստեղծագործական ակտիվությամբ, որը դարձնում է անձնային որակը,

7- գործողությունների պլանի մշակում՝ որպես աշխատանքի կազմակերպման արդյունավետության բարձրացման պայման, 7. սովորողների մեջ

ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների ձևավորման նպատակով վերահսկողություն և ուշադրություն ուսուցչի (ղեկավարի) կողմից՝ սովորողների կարողությունների և հմտությունների ճանաչման և դրանց զարգացման համար, հետագա գործընթացում ապահովելու սովորողների համապատասխան հմտությունների և կարողությունների առկայության, այսինքն՝ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների համապատասխան մակարդակի ապահովում:

8. աշխատանքի արդյունավետ ընթացքի առկայության, երբ սովորողները գիտակցում են, հաշվետու են լինում ինչպես վերջնարդյունքների, այնպես և թույլ տված սխալների հարցում, այսինքն՝ մեծ դեր է խաղում աշխատանքի վերլուծությունը և զեկուցումը,

9. աշխատանքի ոչ շատ պարզ ընտրությամբ՝ հաշվի առնելով սովորողների մտավոր ունակությունների զարգացման մակարդակը: Ըստ որի, աշխատանքների աստիճանական բարդացման հիմնական երեք ուղղություններն են.

ա) առաջադրանքների ծավալի մեծացման և հատկացվող ժամանակի ավելացման ուղիով,

բ) առաջադրանքների բովանդակության բարդացման ուղիով,

գ) հրահանգների աստիճանաբար կրճատման ուղիով,

10. աշխատանքի անհրաժեշտ ստուգման իրականացմամբ, որն ամփոփում է վերջնարդյունքները, որի ընթացքում անհրաժեշտ է գիտակցել սխալները, թերըմբռնումներն ի հայտ գալու պատճառները, գտնել ուղիներ դրանք շտկելու համար, և որը հնարավորություն կտա ճիշտ պլանավորելու սովորողների հետագա աշխատանքները:

Սովորողների ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացմանն ուղղված համկարգված պայմանը այդ աշխատանքների հետ առնչվող մի շարք գործառույթներնն են: Ուսուցիչի (ղեկավարի) վարպետության շնորհիվ են ստեղծվում այն իրավիճակները, որտեղ սովորողները ստիպողաբար չէ, որ կատարում են այս, կամ այն բնույթի աշխատանքները, այլ հետաքրքրությամբ , իրենց կամքով ու հաճույքով: **(Հավելված՝ Մաս -4):**


ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
ՊԱՏԱՍԽԱՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ
Նպատակի ձևավորում
Աշխատանքի կազմակերպման պարբերականություն
Գործողությունների կատարման պլանի մշակում
Թեմայի շուրջ աշխատանքի բնույթն ըստ սովորողների զարգացման մակարդակի
Նախապատրաստվածություն
Համապատասխան կարողությունների և հմտությունների ստեղծում
Խմբերի աշխատանքի համակցումը ուսումնական գործունեության այլ գործերի հետ
Աշխատանքի ընթացքի արագի ստուգում
Միասնների գրանցում
Ուսուցչի (դեկավարի հրահանգները)
Վերջնարդյունքների ստուգում
Թերըմբռնումների պատճառների բացահայտում
Բանավոր
Գրավոր
Միասնների թերըմբռնումների շտկում
Հետագա աշխատանքի ճիշտ պլանավորում
Ինքնակառավարման միջոցով
Գնահատում

Աղյուսակ 2

Մաս 5 Աշխատանքի տեսակները առարկայի դասավանդման ընթացքում

1. Ըստ ձևավորված նպատակների՝

- Նյութի ընկալմանը նախապատրաստող
- Նյութի ուսումնասիրմանը նպաստող
- Գիտելիքները համակարգող
- Որոշակի կարողություններ զարգացնող
- Ստուգող, վերահսկող։

2. Ըստ ճանաչողական գործունեության բնույթի՝

- Տրված նյութի շուրջ աշխատանքներ, որոնք լինում են՝
- ա) տեսական ընկալման,
- բ)վերարտադրողական-կիրառական
- Կառուցողական

ա) աշխատանքի հնարների ընտրություն,

բ) իրադարձությունների, երևույթների, փաստերի վերլուծություն,
գ) ճանաչողական ներքին դրդապատճառների զարգացում,

դ) մտավոր ակտիվության զարգացում,

ե) սովորողի ստեղծագործական գործունեության հենքի ձևավորում։

- Ստեղծագործական-հետազոտական

ա) ինքնուրույնության և նախաձեռնության ձևավորման գագաթնակետը,

բ) գիտելիքների տեղեկատվական որոնման հմտությունների ձևավորում,

գ) ստեղծագործական ունակությունների ձևավորում, նոր գիտելիքների ձեռքբերում։

3. Ըստ կազմակերպման ձևի՝

- Ընդհանուր (ֆրոնտալ), երբ բոլոր սովորողները կատարում են միևնույն աշխատանքը։
- Խմբային, երբ սովորողները՝ ըստ խմբերի բաշխված նյութի շուրջ են աշխատում։
- Անհատական, երբ սովորողներից յուրաքանչյուրն աշխատում է նյութի շուրջ կազմված հատուկ առաջադրանքի վրա։
- *4. Ըստ կատարման տեղի՝ կախված է նշված տեսակների ընտրությունից։* **(Հավելված՝ Մաս- 5)։**

Մաս 6 Աշխատանքների ընթացքում առաջադրանքներ ծավալը և բնույթը

1. Ուսումնառության ընթացքում սովորողները ոչ միշտ են կարողանում հաղթահարել ուսումնական և արտադասարանական աեաջադրանքների կատարումը։ Պահանջվում են անհարժեշտ գիտելիքներ.

ա/.հոգեբանական պատրաստվածություն, այսինքն՝ զարգացնել սովորողի կարողությունը՝ աշխատանքը կատարելու համար հոգեբանորեն անհրաժեշտ իրավիճակ ստեղծելու հարցում։

բ/.սովորողը կարողանա յուրացնել ինքնավերլուծության և ինքնագնահատման տարրական կարողություններ։

գ/. Սովորողը կարողանա մշակել աշխատանքի քայլաշարը և ունենա իր ուսումնական գործողությունների ընդհանուր վերջնարդյունքը կանխատեսելու կարողություններ։

դ/.Առաջադրանքը կատարելիս կարողանա ցուցաբերել նախաձեռնողական և ստեղծագործական կարողություններ։ Այս պայմանների առկայությամբ ուսուցիչը (ղեկավարը) անրադառնում է սովորողների ուսումնառության առաջադրանքների ծավալին ու բնույթին։
Աշխատանքների առաջադրանքների ծավալը պլանավորելիս հաշվի է առնվում սովորողների աշխատանքի տեմպը։

Սովորողների ուսումնական գործունեության առաջադրանքների բնույթն աստիճանաբար բարդացվում են։ Յուրաքնչյուր աշխատանքի համար նախատեսված առաջադրանքները կարողանան նպաստել դրանց հանդեպ սովորողների հետաքրքրության զարգացմանը։

Առաջադրանքների ընտրությունը համապատասխանի սովորողների ներուժին և պահանջվող կարիքներին։ Նպատակահարմար է առաջադրել տարբերակված առաջադրանքներ՝ ըստ սովորողների առանձին խմբերի պատրաստվածության մակարդակի։

Առաջադրանքների բովանդակությունը մատչելի և հասանելի լինի սովորողին, հենված լինի նրանց կենսափորձին, բայց միևնույն ժամանակ գտնվի նրանց զարգացման «մերձակա գոտում», պարունակի որոշակի դժվարություն, որը սովորողները կարող են հաղթահարել։ Ցանկալի է , որ աշխատանքի համար առաջադրանքները սովորողներից պահանջոն կամային ջանքեր։.Արդյունավետ է առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման ընթացքում սովորողները գիտելիքները կիրառեն նոր իրավիճակներում։ միայն այդ դեպքում աշխատանքը կնպաստի սովորողների ճանաչողական, նախաձեռնողական, ստեղծագործական ունակությունների ձևավորմանը։ .

Յուրաքանչյուր թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության հարցում ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների բազմակողմանիորեն ամրապնդմանը, հստակ առանձնացնել այն կարողություններն ու մտությունները, որոնք անհրաժեշտ է ձևակերպել և ամրապնդել։ Առաջադրանքների պատահական ընտրությունը կարգելակի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը։ **(Հավելված՝ Մաս- 6 (1,2))։**

2. Ուսուցման և ուսումնառության աշխատանքների պլանավորումը և նախատեսված առաջադրանքների առաջադրման ձևը

Սովորողների ուսումնական թեմայի առաջադրանքները կարելի է առաջադրել ուսումնասիրված և մշակված ձևով՝

1 Անհատական քարտեր՝

ա) օգնող, աջակցող հրահանգներով,

բ) հիմնական առաջադրանքներով, որոնք կազմված են եռաստիճան մակարդակով՝

- թույլ կամ ցածր կարողություններով սովորողները ստանում են առաջադրանք՝ օգնության տարրերով,

-միջին կարողություններով սովորողները ստանում են հիմնական առաջադրանքները,

գ/. ուժեղ կարողություններով սովորողները ստանում են այդ առաջադրանքների բարդացված տեսակները։

Խմբային մեթոդով աշխատանքի կազմակերպումը կատարվում է՝

ա) ուսումնառության թեմայի բաշխումը,

բ) քայլաշարերի մշակում՝ ըստ պլանի,

գ)տեղեկատվական նյութերի հավաքում՝ հաշվի առնելով տրված ժամանակահատվածը,

դ) վերահսկումը, աշխատանքի կարգապահական կանոնների պահպանումը,

ե) աշխատանքի հաջորդական վերլուծությունը,

զ) աշխատանքի համադրումը խմբերի միջև՝ թեմայի ամբողջականությունը և ներքին գաղափարական կապը պահպանելու համար,

է) աշխատանքի ինքնաստուգում, սխալների շտկում, ինքնագնահատում։

Սովորողների մեջ ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունները առարկայի ուսուցման ընթացքում ձևավորում են՝ ըստ կազմված

պլանի, առաջադրանքների նպատակային ընտրության շնորհիվ: Գործածվում է աշխատանքի պլանավորման երկու տեսակ.

1. հեռանկարային, որը տեղ է գտնում աշխատանքների առարկայական թեմատիկ պլաններում,

2. ընթացիկ, որը մշակում է առանձին նյութերի ուսուցման ընթացքում:

Պլանավորելով առարկայի ուսուցման աշխատանքները անհրաժեշտ է.

ա/ որոշել հիմնական գաղափարը աշխատանքի կառուցվածքում,

բ/ որոշել ընտրված թեմայի ծավալը, որը կարող է կախված լինել սովորողների նախապատրաստվածության մակարդակից, ինչպես նաև ուսումնասիրվող նյութի բարդությունից,

գ/ նախապատրաստել ուսումնական նյութի (թեմայի) սովորողների աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել այդ աշխատանքի կատարման ընթացքում,

դ/ սովորողների ուսումնառության աշխատանքն անհրաժեշտ է պլանավորել ինչպես ըստ ձևի, այնպես և՝ ըստ բովանդակության,

ե/ նախապատրաստել նյութի շուրջ աշխատանքին տրամադրող ժամանակի տևողությունը՝ ըստ թեմայի (նյութի) ծավալի,

զ/ ընտրել համապատասխան դիդակտիկ նյութեր, հրահանգներ, գծապատկերներ, այլ նյութեր, որոնք կնպաստեն ուսումնառության թեմայի (նյութի) աշխատանքի արդյունավետությանը, հնարավոր սխալների կանխմանը, աշխատանքի հանդեպ հետաքրքրության առաջացմանը,

է/ վերլուծել, համադրել աշխատանքի միջև եղած կապը,

ը/ արժևորել վերջնարդյունքները՝ որպես թեմայի վերաբերյալ առաջադրված հարցի և նպատակի կատարողական, ինչպես նաև գնահատման մակարդակ:

Մաս 7 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1.Ընդհանրացումներ:

Ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունները լինելով սովորողների գիտելիքների ձեռք բերման, հմտությունների և կարողությունների, արժեքային համակարգի ձևավորման խթան, իրենց մեջ պարունակում են սովորողների տարատեսակ դրսևորումներ, հետաքրքրություններ: Ուսուցչի (ղեկավարի) դերը նրանց ճանաչելն է, բացահայտելը: Սովորողների ներուժը հանդիդսացող գիտակցական, մտային ունակությունների համախումբն է, անձնային որակը, որը բնութագրվում է նրա գործունեությամբ: Ուսուցչն (ղեկավարն) է, որ նպատակաուղղված և ճշգրիտ աշխատանքի միջոցով սովորողին մղում է լավագույն դրսևորումների: Մանկավարժական յուրաքանչյուր մոտեցում տանում է սովորողի անձի որակների ձևավորման և զարգացման հիմնարար խնդրի լուծմանը: Քանզի անձի՝ սովորողի ձևավորմամբ է կանխորոշվում մարդկության ժողովրդի ապագան՝ մի ճանապարհ, որտեղից սկսել է քայլել մարդը, քայլում է և դեռ քայլելու է: Նրա հետքին դրոշմված են քաղաքակրթություններ, որոնք մարդ-հասարակությոան զարգացման դիմագիծն են թողել իրենց ժամանակներում: Մարդը զարգացող բանական էակ է՝ օժտված բազում կարողություններով: Յուրաքանչյուր ժամանակաշրջան պահանջում է սովորողից նոր որակներ, հատկանիշներ, որոնց ձևավորման համար՝ նոր միջոցներ ու նոր հնարներ: Այդ ժամանակաշրջանները իրենց պայմաններով, պահանջներով և բազմապիսի յուրահատկություններով իրենց ներգործությունն են թողնում մարդու գիտակցական, հոգևոր զարգացման վրա, որը դրսևորվում է հասարակության մեջ՝ փոխադարձ հարաբերություններում, կենսակերպում՝ սկսած կրթության առաջին շեմից: Այդ հարաբերություններն են ձևավորվում սովորողների անհրաժեշտ որակները, հատկանիշները, այսինքն՝ սովորողների մեջ ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունները, որոնք նոր ժամանակի կրթության հիմնական պահանջներն են:

2. Վերջնարդյունքների արժևորում:

Հասարակական զարգացման յուրաքանչյուր ժամանակահատված իր վրա է կրում ուսուցանողի և սովորողի փոխներգործուն ուսուցման և ուսումնառության օրինաչափ ընթացքը, որն ուղղորդվում է առաջավոր մտքի, փորձի կանոնակարգված և արդեն փորձարկված արդյունավետ հնարներով, ձևերով, մեթոդներով:

Մարդկության զարգացման նոր փուլում նոր ժամանակի կրթությունը թելադրում է սովորողների ուսուցման և ուսումնառության գործընթացին զուգակցել նոր միջոցներ, որոնք խթանում են ոչ միայն անձի բազմակողմանի զարգացումը, այլև նրա

ինքնակրթության ու ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների ձևավորմանը: Այդ ամենի իրականացումը հնարավոր է ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ՝ հիմնված մանկավարժական և մեթոդական ձևերով ու միջոցներով առարկայի ուսուցման և ուսումնառության կանոնարկված աշխատանքներին: Որքան մտային-հոգևոր դաշտը մեծ է, մարդկության զարգացման փուլերում, այնքան քաղաքակրթությունը վերելք է ապրում կենսակերպի բոլոր ոլորտներով:

Հետևաբար 21-րդ դարում՝ մարդկության զարգացման նոր փուլում ուսուցման և ուսումնառության փոխներգործուն գործընթացում նոր ժամանակի կրթության պահանջը կարևորում է՝

1.չափորոշչահեն կրթությամբ և գնահատմամբ,

2.սովորողների ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների ձևավորմամբ,

3. սովորողների ընկալման և մտավոր գործունեության ծավալելու ունակությունների հաշվառմամբ,

4. փոխներգործուն և ճկուն ձևերի օգտագործմամբ, որոնք ձևավորում են սովորողների գիտելիքները, անհրաժեշտ տեղեկատվությունը ինքնուրույն ձեռք բերելու, ընդհանրացումներ և եզրակացություններ անելու կարողությունները, այսինքն՝ սովորողները ձեռք բերեն վերառարկայական ուսումնական կարողություններ, որոնք ապահովում են ինքնուրույնաբար, նախաձեռնաբար և ստեղծագործաբար ուսումնական գործունեության ծավալումը,

5.ուսուցչի (ղեկավարի) անհրաժեշտ ուղղորդմամբ անդրադարձ կատարելու, սովորողի մտքերը և գործունեությունը գնահատելու, գործունեության արդյունքները առաջադրված նպատակի հետ համադրելու, իրենց իմացածի ու չիմացածի սահմանները որոշելու ունակությունների և վերջնարդյունքների արժևորմամբ,

6. գործունեությունների յուրաքանչյուր փուլում գլոբալ գաղափարախոսությունը ծառայեցնելու ազգային ինքնության և իր ժողովրդի շահերին՝ համապատասխան վերաբերմունքի, հարաբերությունների ձևավորմամբ և զարգացմամբ:

... «Փնտրված գիտությունը ավելի տեղ կգտնի մարդու մեջ, քան տրված գիտությունը: Որքան ճշմարտությունը ավելի քաղցր ընդունելություն կգտնի և ավելի ծանր կշիռ կունենա մարդու կյանքի մեջ, քան դրսից

հրամցված, առաջարկված ճշմարտությունը» (էջ՝ 321- հոգևոր գրադարան), «Ազգի արժեքն է , որ ազգի հանդեպ սիրո, հարգանքի և նվիրումի զգացումներն ու ձեռքբերումները կարթնացնի մարդ-էակի մեջ, և առավելապես՝ հայ մարդու հոգու մեջ» (էջ՝-100), «Նոր ընձյուղներ Հայոց ազգի, նայեցեք խոր՝ ձեր գոյության արմատներին։ Ինչ հորդառատ ավիշ կա ամբարված նրանց մեջ։ Լցրեք այն ձեր թարմաշունչ և աճողական գոյության տարրերի մեջ» (էջ՝162)։ «Գործը պետք է լինի մեր խոսքը, և երբ գործն է խոսքը, այդ պահին լեցուն է խոսքը, վավերակա՛ն, ճշմարի՛տ, համոզի՛չ և հպարտառի՛թ»։

/Ամենայն հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ.Գարեգին Առաջին/

Մաս 8 Հետազոտական աշխատանքների համար օգտագործված երաշխավորվող գրականության ցանկ

1. Կ. Թորոսյան , Կ. Չիբուխչյան, «Հիսուն (50) հարց և պատասխան I-II մասեր» ԶԱՆԳԱԿ հրատ.2013թ.

2.Գիտամեթոդական վերլուծական ամսագիր՝ «Մանկավարժ» (1-2-րդ համարներ 2007թ., 10-րդ համար՝էջ 126, 79, 8-րդ համար՝ էջ 271)։

3. Ն.U.O.S.S. Գարեգին Առաջին Հայրապետի գրական ժառանգությունից՝ «Ասույթներ և պատգամների ընտրանի» Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին տպարան -1999թ .(էջ՝ 162, 165, 321)։